Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում

ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիր

Տեղեկագիր

Թիվ 18

2025թ. հոկտեմբեր

Հոկտեմբեր ամսվա ընթացքում գրանցված հաջողությունները

2025 թ.-ի հոկտեմբեր ամսվա ընթացքում գրանցվեց առաջընթաց Հայաստանի՝ ժամանակակից և միջազգային չափանիշներին համապատասխանող որակի ենթակառուցվածքի ձևավորման ճանապարհին:
ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրով ՄԱԱԶԿ-ը շարունակեց աջակցել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ին՝ (Ստանդարտների և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ) ուժեղացնելով լաբորատոր կարողությունները, նախապատրաստելով հավատարմագրմանը և համապատասխանացնելով չափագիտության ազգային համակարգը միջազգային չափանիշներին:

Հայաստանի որակի ենթակառուցվածքի համակարգի զարգացման կարևոր ձեռքբերումը

Միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրման մարմինը հաջողությամբ ավարտեց ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի նորաստեղծ էլեկտրական և ուժի մոմենտի տրամաչափարկման լաբորատորիաների գնահատման գործընթացը: Ավելին, ճնշման տրամաչափարկման լաբորատորիան նույնպես ներառվել է գնահատման փուլում:
Հայաստանը, հատկապես ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ը, հաստատուն քայլեր է ձեռնարկում միջազգային հավատարմագրում և ճանաչում ունեցող լաբորատորիաների ստեղծման ուղղությամբ:
Միջազգային հավատարմագրումը երաշխավորում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տրամադրած չափումների և տրամաչափարկման արդյունքների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին:

ՄԱԱԶԿ-ը խթանում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի ուժի մոմենտի և ճնշման տրամաչափարկման լաբորատորիաների հավատարմագրման գործընթացը (սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 3-ը)

ՄԱԱԶԿ-ը կազմակերպեց հերթական պրակտիկ դասընթացն ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի ուժի մոմենտի և ճնշման տրամաչափարկման լաբորատորիաների մասնագետների համար: Դասընթացն ուղղված էր ներքին աուդիտի իրականացման գիտելիքների խորացմանը՝ համաձայն ISO/IEC 17025:2017 պահանջների:
Շաբաթվա ընթացքում մասնագետները մշակեցին աուդիտի ծրագրեր, կիրառեցին ISO ստանդարտներին համապատասխան ստուգաթերթեր, հայտնաբերեցին շեղումներ և կազմեցին շտկողական գործողությունների քայլեր: Այս դասընթացը կարևոր քայլ է Հայաստանի որակի ենթակառուցվածքի զարգացման և այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

ՄԱԱԶԿ-ն աջակցում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի էլեկտրական լաբորատորիայի միջազգային հավատարմագրման նախապատրաստմանը (հոկտեմբերի 6-ից 10-ը)

ՄԱԱԶԿ-ը կազմակերպեց պրակտիկ դասընթաց ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի էլեկտրական տրամաչափարկման լաբորատորիայի մասնագետների համար, որի ընթացքում մասնակիցները խորացրեցին գիտելիքները թվային մուլտիմետրերի (DMMs) և ստանդարտ ռեզիստորների տրամաչափարկման, չափումների անորոշության գնահատման, հետագծելիության ապահովման, ինչպես նաև միջլաբորատոր և երկկողմ համեմատությունների ուղղությամբ (ILCs/BILCs): Այս վերապատրաստումը հանդիսացավ հավատարմագրման գնահատման նախապատրաստական վերջին փուլը:
Դասընթացի ավարտին ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի մասնագետները ամրապնդեցին տեխնիկական կարողությունները և բարձրացրեցին լաբորատորիայի պատրաստվածությունը միջազգային հավատարմագրմանը:

ՄԱԱՁԿ-ը խորացնում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի ժամանակի և հաճախականության չափագիտության լաբորատորիայի մասնագետների գիտելիքները (հոկտեմբերի 27-ից 31-ը)

ՄԱԱՁԿ-ն անցկացրել է պրակտիկ դասընթաց, որի նպատակն էր ուժեղացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տրամաչափարկման և չափման ծառայությունների տրամադրման կարողությունները, ինչպես նաև աջակցել ժամանակի և հաճախականության չափագիտության լաբորատորիայի նախապատրաստմանն ազգային հավատարմագրմանը՝ հարթելով ուղին միջազգային հավատարմագրման գործընթացի համար:

Վերապատրաստման ծրագիրը ներառում էր տեսական և պրակտիկ դասընթացներ, որոնք վերաբերում էին ժամանակի և հաճախականության չափումներին, չափման անորոշության գնահատմանը, ինչպես նաև ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի և Լիտվայի Ֆիզիկական գիտությունների և տեխնոլոգիաների կենտրոնի միջև իրականացվող համեմատական ուսումնասիրության (պիլոտային ծրագիր) ավարտական փուլին՝ համաձայն ISO/IEC 17025:2017 պահանջների: Դասընթացի կարևոր բաղադրիչ էր միջազգային փորձագետի աջակցությամբ իրականացրած սիմուլյացիոն ներքին աուդիտը, որի ընթացքում գնահատվեց լաբորատորիայի պատրաստվածությունն ազգային հավատարմագրման գործընթացին և սահմանվեցին հետագա բարելավման ոլորտները:

Հնգօրյա ինտենսիվ դասընթացի ժամանակ ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի հինգ փորձագետ կիրառեցին ներքին աուդիտի ստուգաթերթեր, գնահատեցին շեղումները և իրականացրեցին շտկողական գործողություններ՝ դրանք ինտեգրելով լաբորատորիայի որակի կառավարման համակարգում: Դասընթացի արդյունքում ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի ժամանակի և հաճախականության տրամաչափարկման լաբորատորիան ամրապնդեց տեխնիկական կարողությունները և բարձրացրեց պատրաստվածությունն ազգային հավատարմագրմանը, ինչը կարևոր քայլ է Հայաստանի ազգային չափագիտական ենթակառուցվածքի զարգացման ուղղությամբ:



Ծրագրի մասին

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային եւ տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան եւ առեւտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

Ծանոթագրություն

Ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Այս տեղեկագրի բովանդակության պատասխանատուն բացառապես հեղինակներն են եւ այն կարող է չարտահայտել Եվրոպական միության եւ ՄԱԱԶԿ-ի տեսակետները: Այս տեղեկագիրը հրապարակվել է «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Տեղեկագիրը պատրաստվել է առանց Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական խմբագրման:

Ծրագրի արդյունքները (2025թ. հոկտեմբեր)

ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի 11 աշխատակցի վերապատրաստում կարողությունների զարգացման դասընթացների արդյունքում

4,341 դիտում և 585 ներգրավվածություն սոցիալական մեդիայի հարթակներում հրապարակումների արդյունքում

749 հետևորդ ծրագրի սոցիալական մեդիայի հարթակներում

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝
Ծրագրի ղեկավար Ցոնգ Վուին՝ C.WU@unido.org
Ծրագրի համակարգող Հայաստանում Մանե Թափալցյանին՝ m.tapaltsyan@unido.org

Նորությունների համար հետևեք մեզ՝

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից